

Գործ.բ. №30

ԻՐԱՎԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

2012 թ.



- Կնիք գործածելը գործարարությունում այլևս վերացված է
- Կադրային քաղաքականություն. աշխատանքային պայմանագրի լուծումը ժամկետը լրանալու պատճառով
- Հաշվապահական հաշվառման քաղաքականություն. հրահանգներ
- Հարց ու պատասխան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Արմեն Սարգսյան
«Գործք» ՍՊԸ-ի տնօրեն



Արթուր Սարգսյան
Գլխավոր խմբագիր



Լևոն Ամիրջյան
Տնօրենի օգնական, ձևավորող



Արփիկ Կանցյան
Աշխատակազմի ղեկավար



Մարինե Չարիչյան
Մեթոդաբան



Աննա Դավթյան
Իրավաբան



Արմինե Բադալյան
Խմբագիր



Հովհաննես Աղեկյան
Հաշվապահ



Թերեզա Ղարաբաղյան
Մենեջեր

Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Գործք» ՍՊԸ

Գլխավոր խմբագիր՝
Արթուր ՍԱՐԳՍՅԱՆ

Խմբագրության հասցեն՝
ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք
հեռ.՝ (010) 54-19-85
ֆաքս՝ (010) 56-72-93
www.gortsq.am
www.press.gortsq.am
press@gortsq.am

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Աշխատանքի իրավունքի պաշտպանի
(հաշտարարի) գրասենյակի ղեկավար

ԱՇՈՏ ԵՍԱՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության
աշխատակազմի ղեկավար

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՀՀ ԱԺ ֆինանսատնտեսական
հանձնաժողովի նախագահի տեղակալ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման
վարչության պետի տեղակալ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԷՂՈՒԱՐԴ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՀԱՄԿ-ի նախագահ

ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի
դասախոս, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ

Գրանցված է 11.02.2005թ.,
պետական գրանցման
վկայական՝ N 03Ա067699,
տրված՝ 14.02.2005թ.

Տպաքանակը՝ 2500
Գինը՝ պայմանագրային

Տպագրության է տրվել 21.05.2012թ.
Տպագրվել է՝
«ԱՆՏԵՆՈՐ» տպարանում

Գովազդային նյութերի բովանդակության
համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

ԲՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1.1. Փոփոխություններ և լրացումներ ՀՀ օրենքներում

• «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք	4
• Կնիք գործածելը գործարարությունում վերացված է. փոփոխություններ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված շուրջ 38 օրենքներում	9
• Փոփոխություն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում	10
• Լրացում «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում	11
• Լրացում «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում	12
• Լրացում «Հարկերի մասին» ՀՀ օրենքում	14
• Փոփոխություններ «Հարկերի մասին» ՀՀ օրենքում	15
• Փոփոխություններ «Գումարների մասին» ՀՀ օրենքում	18

1.2. Փոփոխություններ և լրացումներ ՀՀ կառավարության որոշումներում

• Փոփոխություններ ՀՀ կառավարության 2009թ. մարտի 5-ի «Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը լիցենզավորող մարմնի ու հարկային մարմնի միջև տեղեկատվության փոխանակման կարգը և տեղեկությունները ներկայացնելու ձևերը հաստատելու մասին» N 254-Ն որոշման մեջ	20
• Լրացումներ և փոփոխություն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և ՀՀ պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001թ. դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշման մեջ	22
• Փոփոխություններ ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների ՀՀ տարածքից արտահանման դեպքում նախկինում դրանց ներմուծման համար գանձված մաքսային վճարների վերադարձման կարգը հաստատելու մասին» N 1929-Ն որոշմամբ հաստատված կարգում	26
• Փոփոխություն ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» N 1262-Ն որոշման մեջ	34

II. ՀԱՇՎԱՊԱՀՍԿԱՆ ՀԱՇՎԱՑՈՒՄԱՆ ԲԱՅՁՍՎԱՅՆ

2.1. Փոփոխություններ «ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2005թ. մայիսի 30-ի «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» N 1-05/05 հրամանում	36
2.2. Փոփոխություններ և լրացումներ «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2008 թվականի դեկտեմբերի 25-ի «Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների անցկացման մասին» N 200-Ն հրամանում	55
2.3. Հարկային օրացույց	57

III. ԿԱՌԱՅՈՒՆ ԸՆԴՈՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՅՁՍՎԱՅՆ

3.1. Աշխատանքային պայմանագրի լուծումը՝ ժամկետը լրանալու պատճառով	61
--	----

IV. ՀԱՐՑ ՈՐ ՊԱՏՃԱՆԻՄԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

Տեղեկանք

- ✓ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 26-ին, Երևան քաղաքում: Հաշվառման համար ՀՕ-179-Ն:
- ✓ Օրենքում փոփոխություններ են կատարվել 2012 թվականի մարտի 19-ին, որը ստորագրվել է 2012 թվականի ապրիլի 16-ին: Հաշվառման համար ՀՕ-152-Ն:
- ✓ 2012 թվականի մարտի 19-ին ընդունված օրենքով՝
 - փոփոխություններ են կատարվել Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի չորրորդ պարբերությունում և 6-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ պարբերությունում:
- ✓ 2012 թվականի մարտի 19-ին ընդունված օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հուլիսի 25-ից:
- ✓ 2012 թվականի մարտի 19-ի «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների հիման վրա կազմված հոդվածների ինկորպորացված տարբերակներում փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակների վրա գծի քաշելու ձևով:

Այսպես.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից

26 դեկտեմբերի 1997թ.

ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Վերնագիրը փոփ. 24.10.07 ՀՕ-245-Ն)

Գ Լ ՈՒ Մ ՈՒ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 5. Սոցիալական վճարների դրույքաչափերը

1. Գործատուները յուրաքանչյուր վարձու աշխատողի համար սոցիալական վճարները կատարում են հետևյալ չափերով.

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 20,000 դրամ	7,000 դրամ
20,000-ից մինչև 100,000 դրամ	7,000 դրամ գումարած 20,000 դրամը գերազանցող գումարի 15 տոկոսը
100,000 դրամից ավելի	19,000 դրամ գումարած 100,000 դրամը գերազանցող գումարի 5 տոկոսը

Ընդ որում, սոցիալական վճարները հաշվարկում է յուրաքանչյուր գործատու՝ առանց հաշվի առնելու այլ գործատուի (գործատուների) կողմից վարձու աշխատողի համար կատարված պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

2. Վարձու աշխատողները սոցիալական վճարումները կատարում են հետևյալ դրույքաչափերով՝

Աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 2.000.000 դրամ	3 տոկոս
2.000.000 դրամից ավելի	60.000 դրամ գումարած 2.000.000 դրամը գերազանցող գումարի 8 տոկոսը

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԼՐԱՅՈՒՄ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

Տեղեկանք

- ✓ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 1994 թվականի փետրվարի 14-ին, Երևան քաղաքում: Հաշվառման համար ՀՕ-101-Ն:
- ✓ Օրենքում լրացումը կատարվել է 2012 թվականի մարտի 21-ին, որը ստորագրվել է 2012 թվականի ապրիլի 10-ին: Հաշվառման համար ՀՕ-95-Ն:
- ✓ 2012 թվականի մարտի 21-ին ընդունված օրենքով՝
 - լրացում է կատարվել Օրենքի 10-րդ և 18-րդ հոդվածներում:
 - Ուժը կորցրած է ճանաչվել 16-րդ հոդվածի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը:
- ✓ 2012 թվականի մարտի 21-ին ընդունված օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 28-ից:
- ✓ 2012 թվականի մարտի 21-ի «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացման հիման կազմված հոդվածների ինկորպորացված տարբերակներում ուժը կորցրած ճանաչված նախադասությունը ներկայացվում է հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, իսկ լրացումները գունավորված:

Այսպես.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 3

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 10. Հողի հարկից ազատվում են՝

ա) բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները, ինչպես նաև պետական արգելանոցները և արգելավայրերը, ազգային և ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները և պատմամշակութային նշանակության հողերը, բացառությամբ վարձակալության և ծառայողական օգտագործման տրված հողերի.

բ) հողային ռեֆորմի և սեփականաշնորհման ընթացքում ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները՝ հողի սեփականության իրավունքի ձեռքբերման ամսվանից սկսած երկու տարվա ընթացքում.

գ) հողի այն սեփականատերերը, մշտական և ժամանակավոր օգտագործողները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի ժամկետով եկամտահարկից ազատվելու պայմանով տրամադրվել են հողեր՝ այդ ժամկետի ընթացքում.

դ) բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն).

ե) մասնագիտական տեխնիկական ուսումնարաններին (պրոֆտեխուսումնարաններին) և դպրոցներին կից ուսումնարանական և փորձարարական հողամասերը.

զ) նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը (յուրաքանչյուր սորտի համար ագրոտեխնիկական ցուցումներով սահմանված ժամկետում)՝ դրանց տարածքը 0,1 հեկտար և ավելի լինելու դեպքում.

է) պետական անտառային ֆոնդի հողերը, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության վարձակալության տրված հողերի.

ը) փոստային կապի ազգային օպերատորը.

ը¹) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական և ներկայացուցչական նպատակների համար օգտագործվող հողերը՝ փոխադարձության սկզբունքով, ՀՀ արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի միջնորդության հիման վրա.

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

պաշտոնատար անձի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու պահից: Սույն մասով նախատեսված կասեցման հիմքերի դադարեցումից հետո վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է, եթե հարկային մարմինը կամ հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձը գիտեր կամ կարող էր իմանալ կասեցման հիմքերի դադարեցման մասին:

Հաշվարկված հարկային պարտավորության գումարները չեն կարող նվազեցվել, իսկ հաշվանցվող գումարները չեն կարող ավելացվել, եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի: Անկախ առանձին հարկատեսակների մասին օրենքով սահմանվածից՝ սույն մասում նշված ժամկետը լրանալուց հետո հարկային պարտավորության գումարները կամ հաշվանցվող գումարները փոփոխող հարկատեսակի հաշվարկներ (հայտարարագրեր) չեն կարող ներկայացվել:

(30' հոդվածը լրաց. 21.10.97 ՀՕ-153, 11.10.07 ՀՕ-212-Ն, փոփ. 08.12.10 ՀՕ-181-Ն, 21.03.12 ՀՕ-96-Ն)

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

Տեղեկանք

- ✓ «Հարկերի մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 1997 թվականի ապրիլի 14-ին, Երևան քաղաքում: Հաշվառման համար՝ ՀՕ-107-Ն:
- ✓ Օրենքում փոփոխությունները կատարվել են 2012 թվականի մարտի 21-ին, որը ստորագրվել է 2012 թվականի ապրիլի 16-ին: Հաշվառման համար՝ ՀՕ-110-Ն:
- ✓ 2012 թվականի մարտի 21-ին ընդունված օրենքով՝
 - փոփոխություններ են կատարվել Օրենքի 20-րդ հոդվածի 8-րդ մասում, 9-րդ և 10-րդ կետերում:
- ✓ 2012 թվականի մարտի 19-ին ընդունված օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 26-ից:
- ✓ 2012 թվականի մարտի 21-ի «Հարկերի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների հիման վրա կազմված հոդվածի ինկորպորացված տարբերակում փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, իսկ նորերը՝ գունավորված:

Այսպես.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ III

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Հոդված 20. Սույն օրենքի իմաստով հարկային մարմին ներկայացվող տեղեկություն է համարվում հարկ վճարողների կողմից իրենց, ինչպես նաև այլ հարկ վճարողների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով իրենց մոտ առկա կամ պահվող բացառապես հարկերի հաշվարկմանն առնչվող գործարքների, ակտների ֆիզիկական ծավալների, դրանց տեղաշարժի, իրացման փաստացի գների, իրենց կողմից և իրենց հաշվին վճարված եկամուտների, պահված հարկերի, գույքի կամ եկամուտների, հարկման նպատակով անհրաժեշտ այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները, որոնք հարկային մարմին են ներկայացվում օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Հարկային մարմին ներկայացվող տեղեկություն է համարվում նաև երրորդ անձի կողմից ներկայացվող տեղեկությունը (այսուհետ՝ տեղեկություններ):

Սույն օրենքի իմաստով երրորդ անձ է համարվում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինը, առևտրային, ոչ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը, որը հարկային մարմին է ներկայացնում այլ հարկ վճարողի կամ այլ ֆիզիկական անձի գործարքի

կամ գործառնության կամ գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

Հարկ վճարողներն իրենց տնտեսական կամ ձեռնարկատիրական կամ այլ գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և այլ փաստաթղթերը ներկայացնում են «Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքներով սահմանված կարգով, իսկ օրենքներով նախատեսված դեպքերում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Հարկ վճարողները պարտավոր են առանձին ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին), ինչպես նաև մատուցված ծառայությունների ծավալների և դրանց փաստացի սակագների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել հարկային մարմին: Սույն մասում նշված ապրանքների, ծառայությունների ցանկը և ներկայացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հարկ վճարողները պարտավոր են հարկային մարմին հարկերի վճարմանն առնչվող տեղեկություններ ներկայացնել իրենց հետ գործառնություններ իրականացնող և (կամ) իրենցից եկամուտ ստացող և (կամ) իրենց եկամուտ վճարող հարկ վճարողների վերաբերյալ՝ «Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Ստացված տեղեկության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով հարկային մարմինը կարող է գրավոր հարցում կատարել տեղեկություն ներկայացնողին:

Ըստ աղբյուրների՝ երրորդ անձանց կողմից հարկային մարմին պարտադիր ներկայացվող տեղեկություններն են՝

1) ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկությունները՝ իրավաբանական անձ գրանցելու վերաբերյալ:

«1) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցում (հաշվառում) իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկությունները՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման (հաշվառման) վերաբերյալ.».»

2) բնակչության պետական ռեգիստր վարող լիազորված մարմնի կողմից ներկայացվող տեղեկությունները՝ տրված անձնագրերի և նույնացման քարտերի վերաբերյալ:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործունեության տեսակով զբաղվելու թույլտվություն կամ լիցենզիա տվող լիազորված մարմնի կողմից ներկայացվող տեղեկությունները՝ տրված թույլտվությունների և (կամ) լիցենզիաների վերաբերյալ:

4) «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված ստուգումներ իրականացնելու լիազորություն ունեցող մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված ստուգումների այն արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, որոնք առնչվում են տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական կամ տնտեսական գործունեությանը:

5) ՀՀ կենտրոնական բանկի, ինչպես նաև առևտրային բանկերի կողմից ներկայացվող տեղեկատվությունը՝ հաճախորդի բացած բանկային հաշիվների վերաբերյալ: Տեղեկությունները հարկային մարմին ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկի և հարկային մարմնի սահմանած կարգով:

6) գույքի հաշվառում կամ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող մարմնի կողմից ներկայացվող հետևյալ տեղեկությունները՝

- ա) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ,
- բ) տրանսպորտային միջոցների, դրանց կցորդների և կիսակցորդների վերաբերյալ,
- գ) ջրային, օդային փոխադրամիջոցների վերաբերյալ,
- դ) անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենաների կամ մեխանիզմների, դրանց կցորդների և կիսակցորդների վերաբերյալ:

7) նոտարի կողմից տեղեկությունները հարկային մարմին են ներկայացվում «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

8) կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների և բաժ-

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

տերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

6. Մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով:

(27-րդ հոդվածը խմբ. 19.03.12 ՀՕ-75-Ն)





ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 թՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 254-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

ՏԵՂԵԿԱՆՔ

- ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 5-ի N 254-Ն որոշումն (այսուհետ՝ Որոշում) ընդունվել է Երևան քաղաքում:
- ✓ Որոշման մեջ փոփոխությունները կատարվել են 2012 թվականի ապրիլի 5-ին, որը ստորագրվել է 2012թ. ապրիլի 10-ին: Հաշվառման համար՝ N 394-Ն:
- ✓ 2012 թվականի ապրիլի 5-ին ընդունված որոշումով՝
 - փոփոխություններ են կատարվել Որոշման կարգի 3-րդ կետում և N 2 հավելվածում,
- ✓ 2012թ. ապրիլի 5-ին ընդունված որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 26-ից:
- ✓ Որոշման մեջ կատարված փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, իսկ նորերը՝ գունավորված:

Այսպես.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 մարտի 2009 թվականի N 254-Ն

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
մարտի 5-ի N 254-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԿԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկությունները հարկային մարմնում մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան **տասնհինգ «հինգ»** աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով հարկային մարմինը լիցենզավորող մարմին է ներկայացնում՝

1) տեղեկանք հայտատուի հայտարարությունում նշված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հարկ վճարողի հաշվառման համարների և հարկային մարմնում հսկիչ-դրամարկային մեքենաների գրանցման քարտի համարների համապատասխանության կամ հայտարարությունում տեղ գտած անհամապատասխանությունների մասին.

2) հայտատուի մասին տեղեկություններ՝ սահմանված կարգով առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու անհրաժեշտության կամ բացակայության մասին:

(3-րդ կետը փոփ., լրաց. 28.10.10 N 1380-Ն, փոփ. 05.04.12 N 394-Ն)

N 2 հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ ստորև ներկայացվող բովանդակությամբ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

մապատասխան շահութաբաժինների հաշվառման և վճարման ժամկետների պահպանման նկատմամբ:

4) սույն կարգի 12-րդ և 16-րդ կետերով, ինչպես նաև 34-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետներում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող, ինչպես նաև մասնավորեցված, սակայն շահութաբաժինների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ ունեցող առևտրային կազմակերպությունների կողմից շահութաբաժիններն ամբողջովին չվճարելու դեպքում՝ տեղեկացնում է պետական բաժնեմասը կառավարող մարմիններին և առևտրային կազմակերպությունների նկատմամբ իրականացնում է համապատասխան միջոցներ:

5) օրենքի և սույն կարգի պահանջներին համապատասխան հաշվարկված և ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների գումարը սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չվճարելու դեպքում կիրառում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները: Ընդ որում՝ ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ից մինչև շահութաբաժինների սահմանված չափի փոփոխման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման ընդունման օրը ներառյալ, պատասխանատվության միջոցներ չեն կիրառվում (օրական տոկոսներ չեն հաշվարկվում):

6) առևտրային կազմակերպությունների նկատմամբ ավելի քան մեկ տարի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառելուց հետո շահութաբաժինների գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններն ամբողջովին չմարելու դեպքում՝ ՀՀ վարչապետի քննարկմանն է ներկայացնում այդ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների պաշտոնատար անձանց աշխատանքը շարունակելու նպատակահարմարության հարցը:

(37-րդ կետը լրաց. 05.04.12 N 400-Ն)

(Հավելվածը լրաց., փոփ. 05.04.12 N 400-Ն)

Հայաստանի Հանրապետության 20 թ. պետական բյուջե տարեկան (օրինակելի ձև)

Առկանոնադրական կապիտալում պետության բաժնեմասը, տոկոս	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գումարը, հազ. դրամ	Չվճարված կապիտալի չափը (կանոնադրական կապիտալի հայտարարված և փաստացի համալրված չափերի տարբերությունը), հազ. դրամ	Ջուտ ակտիվները (ընդամենը սեփական կապիտալը), հազ. դրամ	«Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը (հազ. դրամ)	«Ջուտ շահույթը (վնասը) նախքան շահութա-հարկի գծով ծախսի նվազեցումը (հազ. դրամ)	«Շահութա-հարկի գծով ծախսը (փոխհատուցումը) (հազ. դրամ)	Ջուտ շահույթը շահութա-հարկի գծով նվազեցումից հետո, հազ. դրամ	ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 22-ի N 1238-Ն որոշմամբ նախատեսված գումարը շահույթին ավելացումների հանրագումարը, հազ. դրամ
1	2	3	4	4.1»	4.2»	4.3»	5	6

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

եկամուտների կոմիտեում առկա» փաստաթղթերը, կազմում դրանք և վերադաս մաքսային մարմին է ներկայացնում նախկինում վճարված մաքսային վճարների գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վերադարձնելու մասին եզրակացությունները՝ համաձայն NN 2, 3 և 4 ձևերի, և **Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա մաքսային վճարների պարտավորությունների մասին տեղեկանքը՝ համաձայն N 5 ձևի, ինչպես նաև սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերում նշված փաստաթղթերը «սույն կարգի 3-րդ կետում նշված դիմումը»** : Ընդ որում, «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմինը կազմում և վերադաս մաքսային մարմին է ներկայացնում՝

ա) մաքսային վճարների գծով պարտավորությունների առկայության դեպքում՝ եզրակացություն (N 2 ձև).

բ) **մաքսային վճարների գծով պարտավորությունների մարման արդյունքում առաջացած դրական տարբերության, մաքսային վճարների գծով պարտավորությունների բացակայության և տեղեկանքի (N 6 ձև) համաձայն հարկային պարտավորությունների առկայության դեպքում՝ եզրակացություն (N 3 ձև):**

«բ) մաքսային վճարների գծով պարտավորությունների բացակայության կամ պարտավորությունների մարման արդյունքում դրական տարբերության առաջացման դեպքում՝ դիմումում նշված՝ հարկային մարմինների միջոցով պետական բյուջե հավաքագրվող, հարկային և այլ պարտավորությունների մարմանն ուղղվելու դեպքում՝ եզրակացություն (N 3 ձև)»,

գ) մաքսային **ու հարկային** վճարների գծով պարտավորությունների բացակայության և մաքսային ու հարկային վճարների գծով պարտավորությունների մարման արդյունքում առաջացած դրական **տարբերության «տարբերությունը վերադարձնելու»** դեպքում՝ եզրակացություն (N 4 ձև):

(6-րդ կետը փոփ. 22.01.09 N 78-Ն, փոփ., խմբ. 05.04.12 N 404-Ն)

7. վերադաս մաքսային մարմինը «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմնից սույն կարգի 6-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում ուսումնասիրում և հաշվառում է փաստաթղթերը, որից հետո մաքսային վճարների վերադարձը մերժելու հիմքերի բացակայության դեպքում՝

ա) «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմնի կողմից եզրակացություն (N 2 ձև) ներկայացնելու դեպքում՝ համապատասխան մաքսային մարմնին թույլատրում է կատարել հաշվանցումներ.

բ) «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմնի կողմից եզրակացություններ (NN 3 և (կամ) 4 ձևեր) ներկայացվելու դեպքում՝ **եզրակացություններն ուղարկում է «եզրակացությունը, իսկ մեկից ավելի եզրակացությունների դեպքում՝ եզրակացությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքն ուղարկում է»** Հայաստանի Հանրապետության **ֆինանսների և էկոնոմիկայի «ֆինանսների»** նախարարություն:

(7-րդ կետը փոփ. 22.01.09 N 78-Ն, 05.04.12 N 404-Ն)

10. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, ստանալով եզրակացությունները (NN 3 և (կամ) 4 ձևեր), սույն կարգի 3-րդ կետով սահմանված ժամկետում գումարների վերադարձն իրականացնելու համար՝

ա) կատարում է հաշվանցումներ եզրակացության (N 3 ձև) համաձայն;

բ) և (կամ) կատարում է փոխանցում՝ եզրակացության (N 4 ձև) համաձայն:

«10. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, ստանալով եզրակացությունները (N 2 և (կամ) N 3 ձևեր) կամ կատարված հաշվանցումների կամ վերադարձների մասին ամփոփ տեղեկանքները (N 5 և (կամ) N 6 ձևեր), սույն կարգի 3-րդ կետով սահմանված ժամկետում գումարների վերադարձն իրականացնելու համար՝

1) կատարում է հաշվանցում N 3 ձևի եզրակացությանը համապատասխան և (կամ)՝

2) կատարում է փոխանցում՝ N 4 ձևի եզրակացությանը համապատասխան»:

(10-րդ կետը խմբ. 05.04.12 N 404-Ն)

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

Հարկի կամ այլ պարտադիր վճարի անվանումը	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշիվը	Ամբողջ գումարը (ներառյալ հաշվարկված տույժերը) (դրամ)
Ընդամենը		

_____ պետ
մաքսատան (մաքսային կետի) _____
_____ 20 թ. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 4

_____ մաքսատուն (մաքսային կետ)
(մաքսատան (մաքսային կետի) անվանումը)

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N.....

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մաքսային վճար վճարողի _____ 20 _____ թ. դիմումի համաձայն
ՀՎՀՀ-ն կամ սոցիալական քարտի համարը _____
(կազմակերպության անվանումը կամ անհատ
ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

_____ 20 թ. դրությամբ առկա _____ դրամ
(մաքսային վճարների գումարը՝ թվերով և տառերով)
Ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի

_____ հաշվից:
(հաշվի համարը)

Հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարը հարկային վճարների գծով
հաշվառված պարտավորությունների հաշվին կատարվել է հաշվանցում (վերադարձ)՝

1) ձև N2 եզրակացությամբ _____ դրամ գումարով.
(գումարը՝ թվերով)

2) ձև N3 եզրակացությամբ _____ դրամ գումարով:
(գումարը՝ թվերով)

Հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի և մաքսային ու հարկային
պարտավորությունների մարման արդյունքում առաջացած դրական տարբերությունը կազմել է
_____ դրամ, որը ենթակա է փոխանցման:
(գումարը՝ թվերով և տառերով)

Հաշվարկային հաշվի համարը	Բանկի անվանումը	Գումարը (դրամ)
Ընդամենը		

_____ պետ
 մաքսատան (մաքսային կետի) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)
 _____ 20 թ.

Ձև N 5

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Բ N _____

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ NN 22 ԵՎ 3
 ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԴԱՐՁՆԵՐԻ (ՀԱՇՎԱՆՑՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
 կոմիտեն ամփոփելով 20 թ. _____ -ի _____ -ից մինչև 20 թ. _____ -ի
 _____ -ը «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների մասով
 վերադարձման ենթակա գումարների հաշվանցման վերաբերյալ եզրակացությունները՝
 տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետևյալ հաշիվներից
 նշված գումարները ենթակա են հաշվանցման՝ Հայաստանի Հանրապետության պետական
 բյուջեի հետևյալ հաշիվներին.

NN ը/կ	Հաշիվը, որից հաշվանցվում է	Հաշիվը, որին հաշվեգրվում է	Գումարը (դրամ)
	Ընդամենը		

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
 կոմիտեի նախագահ՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 _____ թ.

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

A man in a dark suit is walking, carrying a white briefcase. The image is in a cool, blue-toned color palette. The man is seen from the side, looking forward. The briefcase is a simple, rectangular white bag with a handle. The background is a plain, light blue wall.

ՀԱՇՎԱԴԱՆՍԿԱՆ ՀԱՇՎԱԽՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 1-05/05-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ****ՏԵՂԵԿԱՆՔ**

- ✓ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2005 թվականի մայիսի 30-ի N 1-05/05 հրահանգում (այսուհետ՝ Հրահանգ) փոփոխություններ կատարելու մասին» հրամանն ընդունվել է 2012 թվականի փետրվարի 8-ին: Հաշվառման համար՝ N 33-Ն:
- ✓ 2012 թվականի փետրվարի 8-ին ընդունված հրամանը գրանցվել է 2012 թվականին մարտի 22-ին՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Պետական գրանցման համարն է՝ 12412158:
- ✓ 2012թ. փետրվարի 8-ին ընդունված հրամանով՝
 - փոփոխություններ են կատարվել Հրահանգի 18-րդ, 25-րդ կետերում, 27-րդ կետի առաջին պարբերությունում, «ա)» և «բ)» ենթակետերում, 28-րդ կետի առաջին, երկրորդ պարբերություններում, 35-րդ կետում, օրինակ 4-ում, 43-րդ կետում, Հրահանգի հավելված 3^ա-ում,
 - լրացում է կատարվել 23-րդ կետի «ժ» պարբերությունում:
- ✓ 2012թ. փետրվարի 8-ին ընդունված N 33-Ն հրամանն ուժի մեջ է մտել 2012թ. ապրիլի 12-ին:
- ✓ 2012թ. փետրվարի 8-ին ընդունված N 33-Ն հրամանի մեջ կատարված փոփոխությունների հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակներում փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, նորերը՝ գունավորված:

Այսպես.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

**ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ
ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

(Վերնագիրը փոփ. 08.12.08 N 13-Ն)

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Գործատուների մոտ (անկախ հարկման կարգերից) աշխատանքային պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների համար վարձու աշխատողները սոցիալական վճարներ են կատարում աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3%-ի չափով, որոնց պահումները կատարում են և պետական բյուջե փոխանցում են գործատուները (բացառությամբ հրահանգի 23-րդ կետում սահմանված դեպքի):

Գործատուների մոտ (անկախ հարկման կարգերից) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների համար աշխատողները սոցիալական վճարներ չեն կատարում (այսինքն՝ գործատուները այդ պայմանագրերի շրջանակներում աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3%-ի չափով սոցիալական վճարներ չեն կատարում):

«18. Գործատուների մոտ (անկախ հարկման կարգերից) աշխատանքային պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների համար վարձու աշխատողները սոցիալական վճարումները կատարում են ստորև բերված աղյուսակում նշված չափերով, որոնց պահումները կատարում են և պետական բյուջե են փոխանցում գործատուները (բացառությամբ Հրահանգի 23-րդ կետում սահմանված դեպքի)՝

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

աշխատողը գործատուի մոտ այլևս չի աշխատում, ապա չձևակերպված վարձու աշխատողի համար տվյալ (արձանագրման) ամսում մինչև այդ ամսվա վերջին օրը (ներառյալ) գործատուին վճարում է **սոցիալական վճար 60,0 հազ. դրամ «սույն կետի առաջին պարբերությունում նշված սոցիալական վճարները»** և այդ ժամանակաշրջանների համար այն չի դիտվում (դիտվելու) որպես սոցիալական վճարների օբյեկտի թաքցնելը կամ պակաս ցույց տալը:

բ) եթե խախտումը վերաբերում է նախորդ կամ տվյալ հաշվետու ժամանակաշրջաններին և այդ աշխատողը շարունակում է աշխատել գործատուի մոտ, ապա չձևակերպված վարձու աշխատողի համար տվյալ (արձանագրման) ամսում մինչև այդ ամսվա վերջին օրը (ներառյալ) գործատուին վճարում է **սոցիալական վճար 60,0 հազ. դրամ «սույն կետի առաջին պարբերությունում նշված սոցիալական վճարները»** և այդ ժամանակաշրջանների համար այն չի դիտվում (դիտվելու) որպես սոցիալական վճարների օբյեկտի թաքցնելը կամ պակաս ցույց տալը, այնուամենայնիվ՝ մինչև տվյալ (արձանագրման) ամսվա վերջին օրը (ներառյալ) այդ աշխատողը ենթակա է ձևակերպման գործատուի մոտ որպես վարձու աշխատող և աշխատանքային պայմանագիրը կնքելու օրվանից սոցիալական վճարները հաշվարկվում են ընդհանուր սահմանված կարգով: Եթե չձևակերպված աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է այդպիսի փաստը արձանագրելու ամսում, ապա տվյալ (արձանագրման) ամսում աշխատանքային պայմանագրին համապատասխան աշխատած օրերի համար գործատուին նաև հաշվարկում և վճարում է սոցիալական վճար՝ ընդհանուր սահմանված կարգով (անկախ չձևակերպված աշխատողի համար հաշվարկված և վճարված սոցիալական վճարի գումարից):

գ) նույն գործատուի մոտ նույն աշխատողին (վարձու աշխատողին) վերաբերող՝ մեկ ամսվա ընթացքում և (կամ) նույն ժամանակաշրջանի համար կարող է արձանագրվել միայն մեկ չձևակերպված աշխատողի (վարձու աշխատողի) խախտում, իսկ նույն գործատուի մոտ նույն աշխատողի (վարձու աշխատողի) աշխատանքի չձևակերպման փաստը հաջորդ ամիսներին կրկնակի արձանագրելու դեպքում այն ևս չի դիտվում (դիտվելու) որպես սոցիալական վճարների օբյեկտի թաքցնելը կամ պակաս ցույց տալը:

(Պարբերությունն ուժը կորցրել է 04.02.11 N 34-Ն)

(27-րդ կետը փոփ. 04.02.11 N 34-Ն, խմբ., փոփ. 08.02.12 N 33-Ն)

28. Անհատ ձեռնարկատերերը և նոտարները յուրաքանչյուր ամսվա համար (անկախ գործունեություն իրականացնելու հանգամանքից) նվազագույն սոցիալական վճարները պետական բյուջե են փոխանցում մինչև հաջորդ ամսվա 15-ը, իսկ հաշվետու տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և ամսական նվազագույն սոցիալական վճարների հանրագումարի դրական տարբերությունը պետական բյուջե են փոխանցում (վճարում) մինչև հաջորդ տարվա **մարտի 1-ը «մայիսի 1-ը»** (ներառյալ):

Անհատ ձեռնարկատերերը և նոտարները հաշվետու տարվա արդյունքներով, մինչև հաջորդ տարվա **մարտի 1-ը «ապրիլի 15-ը»** իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հրահանգի հավելված 4-ով սահմանված ձևով տարեկան եկամուտների մասին հայտարարագիր (այսուհետ՝ հայտարարագիր):

Հաշվետու տարում պետական գրանցում ստացած (հաշվառված) անհատ ձեռնարկատերերը և նոտարները այդ տարվա նվազագույն սոցիալական վճարի գումարները վճարում են պետական գրանցում (հաշվառում) ստանալու ամսվանից մինչև տվյալ տարվա վերջին օրը ընկած ժամանակահատվածի ամիսների համար: Լուծարվող (գործունեությունը դադարեցնող) անհատ ձեռնարկատերերը և նոտարները սոցիալական վճարները կատարում են մինչև գործունեության դադարեցման պետական գրանցումն (պետական հաշվառումից հանելը) ընկած ժամանակաշրջանի համար: Մինչև հաշվետու տարին ավարտվելը գործունեությունը (եկամտի աղբյուրի) դադարեցնելու և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում անհատ ձեռնարկատերը տարեկան եկամուտների հայտարարագիրը ներկայացնում և պետական գրանցման վկայականը ժամանակավոր հանձնում է հարկային մարմին ոչ ուշ, քան մեկնելուց մեկ ամիս առաջ՝ այս դեպքում հայտարարագրով հաշվարկված սոցիալական վճարի գումարը վճարվում է վճարման վերջնահաշվարկը կատարելուց հետո 5-օրյա ժամկետում:

Անհատ ձեռնարկատերերը և նոտարները հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետներում ներկայացնելուց հետո իրավունք ունեն ճշգրտումներ մտցնել դրանցում արտացոլված տվյալներում

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարները բավարար չեն սոցիալական վճարների հաշվին վճարվող ժամանակավոր անաշխատունակության նպաստների ~~և քաղման նպաստի՝~~ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վճարելու համար, ապա գործատուն ժամանակավոր անաշխատունակության նպաստների ~~և քաղման նպաստի~~ պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմին ներկայացված՝ համապատասխան տեղեկանքի հիման վրա (հարկային մարմնի հաստատած տեղեկանքը լիազոր մարմին ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում):

Եթե գործատուն օրենքով սահմանված կարգով ազատված է սոցիալական վճարներ կատարելու պարտավորությունից, ապա ժամանակավոր անաշխատունակության նպաստները ~~և քաղման նպաստը~~ ամբողջությամբ վճարվում են գործատուի միջոցների հաշվին: Գործատուի վերակազմակերպման դեպքում վարձու աշխատողներին ժամանակավոր անաշխատունակության նպաստները նշանակում և վճարում է նրա իրավահաջորդը, իսկ լուծարման կամ ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում՝ լիազոր մարմինը:

Սխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարի վճարումը կատարվում է առանց ժամկետի սահմանափակման, ընդ որում՝ վարձու աշխատողներին պակաս վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից սխալը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Ավելի վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարի հետպահումները կատարվում են գործատուի կամ լիազոր մարմնի որոշմամբ, եթե նպաստը նշանակվել և վճարվել է հաշվարկային մեխանիկական սխալի կամ նպաստը ստացողի կողմից սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հետևանքով: Ավել վճարված գումարը հետ է պահվում ամբողջությամբ: Հետպահումը կատարվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաջորդ վճարումներից կամ աշխատավարձից, ընդ որում՝ հետպահվող գումարի չափը յուրաքանչյուր անգամ չի կարող գերազանցել վճարվող ժամանակավոր անաշխատունակության նպաստի կամ աշխատավարձի 20%-ը: Եթե ժամանակավոր անաշխատունակության նպաստը նշանակվել և վճարվել է հաշվարկային մեխանիկական սխալով, ապա ավել վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարի հետպահումները կարող են կատարվել, եթե ժամանակավոր անաշխատունակության նպաստի նշանակման օրվանից չի անցել 3 ամսից ավելի: Եթե ժամանակավոր անաշխատունակության նպաստը նշանակվել և վճարվել է սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հետևանքով, ապա ավել վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարի հետպահումները կատարվում են առանց ժամկետի սահմանափակման: Այս դեպքերում սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկման համար գործատուն Օրենքով սահմանված կարգով ներկայացնում է ճշտված հաշվետվություն:

Հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստը վերահաշվարկվում է, և ավելի վճարված նպաստի գումարի հետպահումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

(35-րդ կետը խմբ. 13.02.06 N 1-05/04-Ն, փոփ. 08.12.08 N 13-Ն, խմբ. 04.02.11 N 34-Ն փոփ., խմբ. 08.02.12 N 33-Ն)

8. ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԵՎ ՆՈՏԱՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

43. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն) գանձվող տուգանքը հաշվարկվում է այդ գործունեության արդյունքում անհատ ձեռնարկատերերի համար Օրենքով սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամտի

10%-ի չափով (բայց 60,0 հազ. դրամից ոչ պակաս), որն ապօրինի գործունեություն իրականացնողների համար ապօրինի գործունեության մասով սոցիալական վճարների վերջնական պարտավորություն է: Այդ դեպքում համախառն եկամուտը որոշվում է հարկային մարմնի կողմից՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 24.11.2005 թ. N 2094-Ն որոշմամբ հաստատված «Հարկային մարմինների կողմից պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների օբյեկտների և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման» կարգը:

«43. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն)՝ գանձվող տուգանքը հաշվարկվում է այդ գործունեության արդյունքում անհատ ձեռնարկատերերի համար Օրենքով սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամտի 10%-ի չափով (բայց 60,0 հազ. դրամից, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատողի համար 60,0 հազ. դրամից ոչ պակաս), որն ապօրինի գործունեություն իրականացնողների համար ապօրինի գործունեության մասով սոցիալական վճարների վերջնական պարտավորություն է: Այդ դեպքում համախառն եկամուտը որոշվում է հարկային մարմնի կողմից՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 24.11.2005թ. N 2094-Ն որոշմամբ հաստատված «Հարկային մարմինների կողմից պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների օբյեկտների և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման» կարգը:

Սույն կետում նշված տուգանքը կիրառվում է նաև կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների համար «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեխնիկական միջոցների համար նախատեսված՝ յուրաքանչյուր լիցենզիայի համապատասխան ներդիրի բացակայության պարագայում ուղևորափոխադրումների դեպքում»:

(43-րդ կետոր լրաց. 13.02.06 N 1-05/04-Լ, **խմբ. 08.02.12 N 33-Լ**)

3474

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ (ԱՅՐ ԹՎՈՒՄ ԶԱՂԱԶԱՅԻԱՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԵՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ, ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ)

Հավելված 3ա

Գործատուների պարտադիր

~~սոցիալական ապահովության վճարների~~

~~ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 20 թ. եռամսյակ)~~

Պետական գրանցման համարը [1]									
Պետական գրանցման ամսաթիվը [2]									
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) [3]									
Ապահովարդի կոդը [4]									
Կազմակերպության անվանումը [5]	Փաստաթղթի հեղբական համարը								
Ֆիզիկական անձի անուն, ազգանունը [6]	N _____								
Գործունեության ոլորտը (ոլորտները) [7]	(լրացվում է հարկային մարմնի կողմից)								
Գտնվելու (բնակության) վայրը [8]									
Հեռախոսը [9]									
Հաշվետվության ներկայացման ամսաթիվը [10]									

Չափի միավոր	Գրամ
-------------	------

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

- [36] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) 37 աշխատանքի պետական տեսչության կողմից կատարված ստուգումներով բացահայտված (արձանագրված) չձևակերպված աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը (յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար 60000 դրամ)
- [37] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) 37 հարկային մարմինների կողմից կատարված ստուգումներով բացահայտված (արձանագրված) չձևակերպված աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը (յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար 60000 դրամ)

Կ.Տ. Տնօրեն (անհատ ձեռնարկատեր, նոտար)

~~(ստորագրություն)~~

~~(անուն, ազգանուն)~~

~~Գլխ. հաշվապահ~~

~~(ստորագրություն)~~

~~(անուն, ազգանուն)~~

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում, հաշվետվությունը լրացվում է 2 օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է գործատուին:

«Հավելված 3ա

Գործատուների պարտադիր սոցիալական ապահովության վճարների

Փաստաթղթի հերթական համարը
N _____
(լրացվում է հարկային մարմնի կողմից)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 20__թ. ____ եռամսյակ

[illegible]

Չափի միավոր	Դրամ
-------------	------

- [1] և [2] տողերում նշվում է գործատուի պետական գրանցման (հաշվառման) համարը և օրը, ամիսը, տարին
- [3] տողում նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)
- [4] տողում նշվում է ապահովագրի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, նոտար) կողմ
- [5] տողում նշվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական ձևը
- [6] տողում նշվում է անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը և ազգանունը
- [7] տողում նշվում է կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության իրականացման ոլորտ(ներ)ը, իսկ նոտարի կողմից նշվում է նոտարական գործունեություն իրականացնելու վերաբերյալ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

- [22] սյունակներում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուից ժամանակավոր անաշխատունակության նպաստներ (բացառությամբ՝ գործատուի միջոցների հաշվին վճարված և ՀՀ պետական բյուջեից չփոխհատուցվող նպաստների) (այսուհետ՝ նպաստներ) ստացած վարձու աշխատողների (նպաստառուների) թիվը
- [23] սյունակներում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված նպաստների (բացառությամբ՝ գործատուի միջոցների հաշվին վճարված և ՀՀ պետական բյուջեից չփոխհատուցվող նպաստների) հաշվարկման աշխատանքային օրերի թիվը
- [24] սյունակներում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված նպաստների (բացառությամբ՝ գործատուի միջոցների հաշվին վճարված և ՀՀ պետական բյուջեից չփոխհատուցվող նպաստների), ինչպես նաև հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետպահվող գումարները
- [25], [26], [27], [28] և [29] տողերում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված նպաստների (բացառությամբ՝ գործատուի միջոցների հաշվին վճարված և ՀՀ պետական բյուջեից չփոխհատուցվող նպաստների) յուրաքանչյուր տեսակների վերաբերյալ տվյալները (նպաստառուների թիվը, աշխատանքային օրերի թիվը, վճարված գումարները)
- [30] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված նպաստների (բացառությամբ՝ գործատուի միջոցների հաշվին վճարված և ՀՀ պետական բյուջեից չփոխհատուցվող նպաստների) գումարների հանրագումարը (տող[25]+տող[26]+տող[27]+տող[28]+տող[29])
- [31] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետպահվող գումարների վերաբերյալ տվյալները (նպաստառուների թիվը, աշխատանքային օրերի թիվը, հետպահվող գումարները)

Աղյուսակ 4

Հաշվարկված սոցիալական վճարի գումարը	[32]			
Կատարված ծախսեր	[33]	()	()	()
Վճարվող սոցիալական վճարի ամսվա գումարը	[34]			
Չձևակերպված աշխատողի սոցիալական վճար 1	[35]			
Չձևակերպված աշխատողի սոցիալական վճար 2	[36]			

- [32] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) հաշվարկված սոցիալական վճարների ընդհանուր գումարը (տող[15]/սյունակ[12]+տող[19]/սյունակ[17]+տող[31]/սյունակ[24])
- [33] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) սոցիալական վճարների հաշվին գործատուի կողմից վարձու աշխատողներին վճարված նպաստների (բացառությամբ՝ գործատուի միջոցների հաշվին վճարված և ՀՀ պետական բյուջեից չփոխհատուցվող նպաստների) ընդհանուր գումարը (տող[30]/սյունակ[24])
- [34] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) սոցիալական վճարների և դրանց հաշվին կատարված ծախսերի դրական տարբերությունը (տող[32]+տող[33], եթե տող[32]>տող[33]) կամ 0 (եթե տող[32]<=տող[33])
- [35] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից կատարված ստուգումներով բացահայտված (արձանագրված) չձևակերպված աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը (յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար 60000 դրամ, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը չի

գերազանցում 3-ը, կամ՝ 150000 դրամ, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը չի գերազանցում 6-ը, կամ՝ 300000 դրամ, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը չի գերազանցում 9-ը, կամ՝ 600000 դրամ, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը գերազանցում է 9-ը)

• [36] տողում նշվում են տվյալ եռամսյակում (ըստ ամիսների) ՀՀ հարկային մարմինների կողմից կատարված ստուգումներով բացահայտված (արձանագրված) չձևակերպված աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը (յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար 60000 դրամ, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը չի գերազանցում 3-ը, կամ՝ 150000 դրամ, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը չի գերազանցում 6-ը, կամ՝ 300000 դրամ, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը չի գերազանցում 9-ը, կամ՝ 600000 դրամ, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը գերազանցում է 9-ը):

Կ.Տ.

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր, նոտար)

(ստորագրություն)

(ստորագրություն)

Գլխ. հաշվապահ

(ստորագրություն)

(ստորագրություն)

Հարկային մարմին առձեռն ներկայացնելու դեպքում, հաշվետվությունը լրացվում է 2 օրինակից: Հարկային մարմնի կողմից գրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է գործատուին»:

(Հավելվածը լրաց. 08.12.08 N 13-Ն, խմբ. 04.02.11 N 34-Ն, խմբ. 08.02.12 N 33-Ն)



ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

«5. Քննության անցկացման օրվա, ժամի և վայրի, նախատեսված հարցաշարի, քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման ժամկետի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության պաշտոնական կայք-էջում՝ քննությունից առնվազն տասը օր առաջ, իսկ դասընթացի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ դասընթացից առնվազն մեկ ամիս առաջ:»

(5-րդ կետը խմբ. 27.03.12 N 83-Ն)

6. Քննությանը կարող են մասնակցել տասնութ տարին լրացած, միջնակարգ կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ~~որոնք ունեն մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգչային ծրագրից օգտվելու իմացություն՝ անկախ դասընթացին մասնակցած լինելու հանգամանքից:~~

(6-րդ կետը փոփ. 27.03.12 N 83-Ն)

12. Թեևստը կազմում է հանձնաժողովը՝ մաքսային բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի «**և մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգչային ծրագրից օգտվելու իմացությունը ստուգող հարցերի**» հիման վրա կազմված հարցաշարից համակարգչի միջոցով պատահականորեն ընտրված քսան հարցերից:

(12-րդ կետը լրաց. 27.03.12 N 83-Ն)



ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑ



Երկ

4

Վիճակագրական ծառայության տեղեկություններ

2012թ. մայիս ամսվա համար վիճակագրական ծառայության տեղեկություններ ներկայացնելու վերջնաժամկետ:

Հնգ

7

ՀԴՄ-ի հաշվետվություն

2012թ. մայիս ամսվան ՀԴՄ-ով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն ներկայացնելու վերջնաժամկետ («Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետ):

Հնգ

14

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարում

Անհատ ձեռնարկատերերի (ձեռներեցների) կողմից 2012թ. մայիս ամսվա համար նվազագույն պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարման վերջնաժամկետ («Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետ):

ԱՎՈՒՄ-ի վճարման վերջնաժամկետ

Մայիս ամսվա աշխատավարձի վճարման վերջնաժամկետ (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մաս):

Ուրբ

15

Եկամտահարկի վճարում

Անհատ ձեռնարկատերերի կողմից 2012թ. II եռամսյակի եկամտահարկի կանխավճարի կամ նվազագույն եկամտահարկի գումարի վճարման վերջնաժամկետ («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետ և 29-1-րդ հոդվածի 1-ին կետ):

Ռեզիդենտների շահութահարկի վճարում

Ռեզիդենտների կողմից 2012թ. II եռամսյակի շահութահարկի կանխավճարի կամ նվազագույն շահութահարկի գումարի վճարման վերջնաժամկետ («Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ կետ և 47-1-րդ հոդվածի 1-ին կետ)

Հաստատագրված վճարների ելակետային տվյալների մասին հայտարարություն ներկայացնելը

2012թ. մայիս ամսվա խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի իրականացման դեպքում հաստատագրված վճար վճարողների համար ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետ)

Հաստատագրված վճարների վճարում

2012թ. մայիս ամսվա հաստատագրված վճարների վճարման վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետ)

Չոր

20

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարում

Գործատուների կողմից 2012թ. մայիս ամսվա պարտադիր սոցիալական ապահովության վճարի վճարման վերջնաժամկետ («Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետ)

Ավելացված արժեքի հարկի հաշվարկ ներկայացնելը (այն անձանց համար, որոնց հաշվետու ժամանակաշրջանը համարվում է ամիսը)

2012թ. մայիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացնելու վերջնաժամկետ («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված),

2012թ. մայիս ամսում դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու վերջնաժամկետ («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված)

Ավելացված արժեքի հարկի վճարում(այն անձանց համար, որոնց հաշվետու ժամանակաշրջանը համարվում է ամիսը)

2012թ. մայիս ամսվա համար հաշվարկված ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետ («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդված)

Եկամտահարկի վճարում

2012թ. մայիս ամսվա համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումներից պահված եկամտահարկի վճարման վերջնաժամկետ («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 23 հոդված)

Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց 2012թ. ապրիլ ամսվա վճարած եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի վճարման վերջնաժամկետ («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 23 հոդված)

Ակցիզային հարկի վճարում

2012թ. մայիս ամսվա ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետ («Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետ)

Հաստատագրված վճարների մասին տեղեկություններ ներկայացնելը

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից 2012թ.մայիս ամսվա ընթացքում իրենց կողմից իրացված գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետ)

Շահութահարկի վճարում

2012թ. մայիս ամսվա ընթացքում ոչ ռեզիդենտից գանձված շահութահարկի գումարների բյուջե վճարման վերջնաժամկետ («Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված)

Ուրբ

29

2012թ. I կիսամյակի համար ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություններ ներկայացնելը

Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների մասին հայտարարություն («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետ)

Հաստատագրված վճարների ելակետային տվյալների մասին հայտարարություն ներկայացնելը

2012թ. հուլիս ամսվա տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի և ինտերնետ շահումով խաղերի գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) մասով ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետ)

Ոչ ռեզիդենտի շահութահարկի կանխավճարի վճարում

Ոչ ռեզիդենտի 2012թ. I-ին կիսամյակի շահութահարկի կանխավճարի վճարման վերջնաժամկետ («Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդված)



ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Հարգելի ընթերցող.

Ինչպես և սպասելի էր, մեր գործընկերները (կազմակերպությունների կադրերի բաժնի պետեր, իրավաբաններ, հաշվապահներ և այլն) բարձր են գնահատել «Կադրային քաղաքականություն» բաժնում «Աշխատանքային պայմանագրի լուծում» խորագրով ներկայացվող աշխատանքից ազատման գործավարության և փաստաթղթային ձևակերպումներին վերաբերող «Գործք» ամսագրի 29-րդ համարից մեկնարկած հրապարակումները: Նրանցից ոմանք, նույնիսկ, առաջարկում են մեկ, երկու համար ամբողջությամբ հատկացնել աշխատանքից ազատման ողջ գործընթացը կանոնակարգող փաստաթղթային ձևակերպումներին և գործավարության առանձնահատկություններին: Հասկանալով նամակագիրների մտահոգությունը, այնուամենայնիվ, հայտում ենք, որ ամսագրի մեկ համար նվիրելը արտադրական այս կամ այն գործընթացի կարգավորմանը վերաբերող հոդվածներին, ցավոք սրտի, չի բխում ամսագրի ռազմավարությունից և չի նպաստում ամսագրում հրապարակվող նյութերի բազմազանությանը, իսկ եթե, այդուհանդերձ, եղել են նման դեպքեր, ապա միայն այն պատճառով, որ տպագրված նյութը հնարավոր չէր մասնատել երկու տարբեր համարներում:

Նախկինում տպագրված նյութերը հեշտությամբ գտնելու նպատակով, յուրաքանչյուր ամսագրում, բացի տվյալ համարում արժարժվող նյութից, կներկայացվի նաև նախորդ համարներում հրապարակված նյութերը՝ նշելով ամսագրի այն համարները, որտեղ դրանք տպագրվել են: Այսպես.

1. Աշխատանքային պայմանագրի լուծումը կողմերի համաձայնությամբ - «Գործք» ամսագիր N 29,
2. Աշխատանքային պայմանագրի լուծումն աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում - «Գործք» ամսագիր N 30 (ներկայացվում է ստորև):

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

Օրինակելի ձև**Ա Կ Տ**

(Ակտը կազմվում է, երբ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պատճառով աշխատանքից ազատվող աշխատողը չի ստորագրում գործատուի կողմից ներկայացված ծանուցագիրը)

201-թ. ----- «---»

թ. -----

Մենք՝ ներքոստորագրյալներս, վկայում ենք, որ մեր ներկայությամբ -----

----- -ը 201-թ.-----«-----»-ին

(նշել ծանուցումը ներկայացնողի անունը, ազգանունը)

ծանոթացրել է -----ին 20--թ.-----«---»-ին կնքված աշխատանքային պայմանագրի

(նշել աշխատողի անունը, ազգանունը, պաշտոնը)

լուծման մասին ----- տնօրենի կողմից ներկայացված ծանուցմանը :

(նշել կազմակերպության անվանումը)

-----ը հրաժարվեց ստորագրել ծանուցումը և

ստանալ այն:

(նշել աշխատողի անունը, ազգանունը, պաշտոնը)

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Սույն ակտը կազմել է՝

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)



ԱՄՍԱԳՐԻ
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿ

Օրինակելի ձև

Կազմակերպության խորհրդանիշը
և անվանումը

Տ Ն Օ Ր Ե Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ն ---Ա

201-թ. ----- «---»

թ. -----

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

----- Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ

(նշել աշխատողի անունը, ազգանունը, պաշտոնը)

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի դրույթներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. 201-թ. ----- « --- » - ին լուծել ----- (նշել կազմակերպության անվանումը) և
----- ի միջև 20-թ. ----- « --- » - ին կնքված թիվ --- աշխատանքային
(նշել աշխատողի անունը, ազգանունը, պաշտոնը)

պայմանագիրը՝ գործողության ժամկետը լրանալու պատճառով (կամ ----- -ին
(նշել աշխատողի անունը, ազգանունը)

201-թ. ----- «---»- ին ազատել աշխատանքից):

2. Վերջին աշխատանքային օր համարել 201-թ. ----- «-----»- ը :

3. Գլխավոր հաշվապահին՝ 201-թ. ----- « --- » -ին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով
կատարել լրիվ վերջնահաշվարկ և վճարել 201-թ. ----- «-----»- ին :

4. Աշխատակազմի կառավարման բաժնի պետ՝ ----- -ին աշխատանքից
ազատված ----- ի անձնական գործն արխիվացնել սահմանված կարգով:
(նշել աշխատողի անունը, ազգանունը)

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պատշաճ կարգով աշխատողներին իրազեկելու պահից:

Հիմք՝ 201-թ. ----- « --- » -ին աշխատողին հանձնված ծանուցումը (կամ ծանուցման մասին ակտը):

Տնօրեն

(ստորագրություն)

201-թ. ----- «---»

ԿՏ

Հրամանը ստացել են

(ստորագրություն)

201-թ. -----



ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻ ՀԱՐՅԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Ե «ԳՈՐԾՔԻ» ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ (ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻ ՀԱՐՅԵՐԸ ՆԵՐԿԱՅՈՒՅՎՈՒՄ ԵՆ ՍՈՍՆՉ ԽԱՐԵՍՊՐԱՆՆ)

Հարց 1. Սեյվ դը Չիլդրեն ինթերնեշնլ հայաստանյան ներկայացուցչություն
Անձը պետք է գնար ամենամյա արձակուրդ:
Երեք օր առաջ վճարվել է արձակուրդային
գումարը, սակայն արձակուրդ գնալուց 1 օր
առաջ հետ է կանչվել: Հետագայում արձա-
կուրդ տրամադրելու դեպքում մորի՞ց պետք
է վճարել:

Պատասխան 1. – ՀՀ աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ ամենամյա արձակուրդից հետևանք է համարվում այն դեպքը, երբ աշխատողն իր համաձայնությամբ դադարեցնում է ամենամյա արձակուրդում գտնվելը (թեկուզև մեկ օր գտնվելով ամենամյա արձակուրդում) և վերադառնում է աշխատանքի: Մինչդեռ Ձեր կողմից նկարագրված դեպքում աշխատողին աշխատանքի մեջ թողնելու որոշումը կայացվել է մինչև ամենամյա արձակուրդի սկսվելը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչև ամենամյա արձակուրդը սկսվելը

առաջ են եկել որոշակի պատճառներ, որոնց հետևանքով ամենամյա արձակուրդը հնարավոր չէ օգտագործել, աշխատողի և գործատուի համաձայնությամբ ամենամյա արձակուրդը տեղափոխվում է այլ ժամանակ: Հետևաբար, Դուք պետք է ընդունեք հրաման ոչ թե ամենամյա արձակուրդից աշխատողին հետ կանչելու վերաբերյալ, այլ՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի պահանջներով ընդունել հրաման՝ ամենամյա արձակուրդի տրամադրման մասին նախկինում ընդունված հրամանը չեղյալ ճանաչելու և աշխատողի ստացած ամենամյա արձակուրդային գումարը հետ գանձելու մասին: Իսկ ամենամյա արձակուրդը, կողմերի համաձայնությամբ, պետք է տեղափոխել (կրկին հրամանով) տվյալ աշխատանքային տարվա մեջ մեկ այլ ժամանակահատված կամ հատկացնել 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար աշխատողին չի հատկացվել ամենամյա արձակուրդը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի, հոդված 67):

Հարց 2. Հարց տվողը չի ցանկացել հրապարակել իր կազմակերպության անվանումը
Վերապատրաստման ժամանակահատվածը աշխատաժամանակի կառուցվածքում ներառվում է, թե՞ ոչ

Պատասխան 2. - ՀՀ աշխատանքային օրենսգրքի 137-րդ հոդվածի համաձայն՝ աշխատաժամանակն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում աշխատողը պարտավոր է կատարել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը, ինչպես նաև դրան հավասարեցված այլ ժամանակահատվածներ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ աշխատաժամանակը ի թիվս այլ ժամանակահատվածների, ներառում է նաև աշխատավայրում կամ ուսումնական հաստատություններում որակավորման բարձրացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

Ինչպես նկատում եք, աշխատաժամանակի կառուցվածքում ընդգրկված է միայն որակավորման բարձրացման ժամանակահատվածը, իսկ վերապատրաստման ժամանակահատվածը՝ չի նախատեսվում:

Հարց 3. Հարց տվողը չի ցանկացել հրապարակել իր կազմակերպության անվանումը երեխայի խնամքի արձակուրդ ո՞ր օրվանից է ձևակերպվում:

Պատասխան 3. - Երեխայի խնամքի արձակուրդ տրվում է (ձևակերպվում է) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նման իրավունք ունեցող անձին՝ վերջինիս դիմելու օրվանից՝ մինչև երեխայի երեք տարեկան դառնալը:

Պատասխան 4. - Աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման ոլորտում միջին ամսական աշխատավարձի հաշվարկման անհրաժեշտությունը ծագում է ժամանակավոր անաշխատունակության նպաստների հաշվարկման և ՀՀ օրենսդրությամբ, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Թե ժամանակավոր անաշխատունակության նպաստ հաշվարկելու և թե աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով այլ դեպքերում միջին աշխատավարձի հաշվարկման համար հաշվի են առնվում աշխատանքի վարձատրության բոլոր տեսակները: Քանի որ ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) տրամադրվող վճարովի արձակուրդի համար, ինչպես նաև աշխատողին աշխատանքից ազատելու ժամանակ ամենամյա արձակուրդի տրամադրման դեպքում վճարվող աշխատավարձը ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 8-ի N 352 որոշման 1-ին հավելվածով հաստատված ցանկում համարվում է աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ և դրանց հավասարեցված եկամուտներ, հետևաբար օրենսդրությամբ սահմանված պահանջների բավարարման դեպքում այն պետք է հաշվի առնել միջին ամսական աշխատավարձի հաշվարկման ժամանակ:

Հարց 4. «ԳՅԻ Երեբունի» ՓԲԸ
Եթե աշխատողը արձակուրդում է գտնվել և հետ են կանչել: Միջին աշխատավարձի հաշվարկման ժամանակ արդյոք պե՞տք է հաշվի առնել չօգտագործված արձակուրդի համար ստացած արձակուրդային գումարը, թե՞ ոչ:

Պատասխան 5. - Աշխատանքային պայմանագրի լուծման համար տրված ծանուցման ժամկետը երկարաձգելու հետ կապված որևէ իրավական դրույթ ՀՀ աշխատանքային օրենսգրքում սահմանված չէ: Սակայն, եթե ծանուցման ժամկետն ավարտվում է ժամանակավոր անաշխատունակության ընթացքում, ապա ՀՀ աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողները պահպանում են իրենց աշխատատեղը և պաշտոնը, եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ոչ ավելի, քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ոչ ավելի, քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով: Այդ դեպքում, աշխատողը կհամարվի աշխատանքից ազատված՝ ժամանակավոր անաշխատունակության ժամկետն ավարտվելուն հաջորդող օրը:

Հարց 5. Հարց տվողը չի ցանկացել հրապարակել իր կազմակերպության անվանումը
Կարելի՞ է աշխատանքային պայմանագրի լուծման համար տրված ծանուցման ժամկետը երկարաձգել աշխատողի հիվանդության պատճառով՝ ժամանակավոր անաշխատունակության օրերի չափով:

Հարց 6. «Երևանի պետական հեռակետային բժշկական բուլեջ» ՊՈԱԿ

Հարգելի Գործք, խնդրում են պատասխանել հետևյալ երկու հարցերին, որոնք վերաբերում են պետական գնումների գործընթացին:

Հարց 6.1. Պետական ոչ առևտրային կազմակերպությունը նախատեսում է ձեռք բերել մեկ միլիոն ՀՀ դրամը գերազանցող նախահաշվային արժեք ունեցող օգտագործված ավտոմեքենա: Խնդրում են պատասխանել՝ ավտոմեքենայի գնման գործընթացը պե՞տք է կազմակերպվի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, թե ոչ:

Հարց 6.2. Պետական ոչ առևտրային կազմակերպությունը նախատեսում է ձեռք բերել պահակային ծառայություններ: Խնդրում ենք պատասխանել, կազմակերպությունը ի՞նչ գործողության ժամկետով կարող է կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր:

Պատասխան 6.

Ձեր առաջին հարցի կապակցությամբ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունը համարվում է պատվիրատու և վերջինիս հատուցմամբ նյութական և ոչ նյութական ակտիվների (արժեքների)՝ բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը նշված կազմակերպությունը պետք է իրականացվի հիշյալ օրենքով սահմանված ընթացակարգերով:

ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի համաձայն, եթե գնման առարկայի նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորը և գնման առարկան ներառված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում հրապարակված շրջանակային համաձայնագրերում, ապա պատվիրատուն տվյալ գնման ընթացակարգը կազմակերպում է շրջանակային համաձայնագրերով:

Հաշվի առնելով, որ տվյալ դեպքում ավտոմեքենային նախահաշվային արժեքը գերազանցում է գնումների բազային միավորը (մեկ միլիոն ՀՀ դրամ), հիշյալ կազմակերպությունը դրա ձեռքբերման գործընթացը պետք է կազմակերպի նույն որոշմամբ հաստատված՝ «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների» կարգին համապատասխան:

Միաժամանակ պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար գնվելիք ավտոմեքենայի չափորոշիչները պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի N 830-Ն որոշմամբ հաստատված պահանջներին: Մասնավորապես ավտոմեքենայի վազքը չի կարող գերազանցել 1000 կիլոմետրը, արտադրության տարեթիվը պետք է համընկնի ձեռքբերման տարեթվի հետ, շարժիչի աշխատանքային առավելագույն ծավալը չպետք է գերազանցի 1,8 Լ, երաշխիքային սպասարկման նվազագույն ժամկետը պետք է լինի 18 ամիս, իսկ առավելագույն գինը՝ 8,5 մլն. դրամ:

Ինչ վերաբերում է Ձեր երկրորդ հարցին, ապա ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի համաձայն՝ կայուն գնի պայմաններում պատվիրատուն ծառայությունների մատուցման պայմանագիրը կարող է կնքել մինչև երեք տարի ժամկետով:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ այս պարագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա պայմանագրով պետք է նախատեսվի, որ յուրաքանչյուր տարի դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Կ. Բրուտյան, տգթ
«Ինտեր Լիմենս» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ

29-րդ համարի խաչբառի պատասխանները

1. Մարժա, 2. Արժեթուղք, 3. Թափոն, 4. Նախագահ, 5. Հաշվանցում, 6. Մուրհակ, 7. Կառավարիչ, 8. Չինովնիկ, 9. Կամավորական, 10. Նկատողություն, 11. Նորմա, 12. Աուդիտ, 13. Տարիք, 14. Ֆակտորինգ, 15. Գրավ, 16. Վարչական, 17. Ներմուծում, 18. Մագալտ, 19. Էմիսիա, 20. Ամորտիզացիա, 21. Անհուսալի, 22. Ինֆլացիա, 23. Ապառիկ, 24. Կապիտալիզացիա, 25. Աճուրդ, 26. Դրույք, 27. Քվոտավորում, 28. Մեթոդ, 29. Դատարան, 30. Նախահաշիվ, 31. Վերջնահաշվարկ, 32. Կոլեկտիվ, 33. Վեճ:

ԱՐԶԱԳԱՆՔ
ՇՈՒՐՋՕՐՅԱ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ
FM
103'5

Ձեզ հետ, Ձեզ համար...



Հեռ./ֆաքս՝ +374 10 65 00 14, +374 10 65 29 31

ՀՀ, 0047, Երևան, Արմենակ Արմենակյան 250, 8-րդ հարկ («Նաիրի» հյուրանոցի շենքում)

www.ardzagank.com

«ԳՈՐԾՔ» ՍՊԸ-Ի «ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ» ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՍՈՎՈՐԵԼՈՒ



«Աշխատակազմի կառավարման ակադեմիան»
կազմակերպում է ուսուցում՝ հետևյալ
մասնագիտությունների գծով.

- ✓ «Աշխատակազմի ղեկավար»
- ✓ «Կադրային գործավար»
- ✓ «Հաշվապահական հաշվառում»

«Աշխատակազմի կառավարման ակադեմիան»
ավարտած անձինք կկարողանան
իրականացնել՝

- ✓ Արդյունավետ կառավարում
- ✓ Անսխալ կադրային գործավարություն
- ✓ Անթերի հաշվապահական հաշվառում



**«Աշխատակազմի կառավարման ակադեմիայում»
դասավանդում են առաջատար մասնագետներ**

**Դասընթացները կազմակերպվում են տեխնիկապես
հագեցած պայմաններում՝ ուսուցման ժամանակակից
մեթոդներով**

Հասցե՝ ք. Երևան, Սարյենի 1, 2/1 տարածք, 0009
Հեռ.՝ (010) 56 18 56, 519 005, 519 008

Էլ. փոստ՝ gortsq@gortsq.am, press@gortsq.am
www.gortsq.am, www.press.gortsq.am